

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի «կեսից ավելին» բառերը փոխարինել «առնվազն երկու երրորդը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի.

1. 2-րդ մասում «կեսից ավելին» բառերը փոխարինել «օրենքով սահմանված թվի կեսից ավելին» բառերով:

2. 5-րդ մասը լրացնել հետևյալ նախադասություններով. «Ավագանու նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարը: Ավագանու նիստերի արձանագրությունները ստորագրում են համայնքի ղեկավարը եւ ավագանու անդամները:»

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 17. Համայնքի ավագանու առաջարկությունը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին

Համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ առաջարկությունը կարող է արվել համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի գրավոր նախաձեռնությամբ:

Սույն հոդվածի առաջին մասով սահմանված առաջարկությունը համայնքի ավագանին կարող է անել.

1) համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջե փաստացի ստացված եկամուտների սահմաններում պարտադիր լիազորությունները չկատարելու կամ պետության պատվիրակած լիազորություններն անբավարար կատարելու դեպքում,

2) այն դեպքում, երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անվավեր են ճանաչվել համայնքի ղեկավարի՝ օրենքին կամ իրավական այլ ակտերին հակասող մի շարք որոշումները,

3) մեկ տարվա ընթացքում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում համայնքի ղեկավարի կողմից երկու անգամ նիստ չիրավիչելու դեպքում:

Համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ առաջարկության քննարկման նպատակով հրավիրված ավագանու նիստին համայնքի ղեկավարի անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում համայնքի ավագանին կազմում է արձանագրություն, որը եռօրյա ժամկետում ուղարկվում է մարզպետին: Արձանագրությունը մարզպետի համար հիմք է իր կողմից համայնքի ղեկավարի անվստահության գործընթացը նախաձեռնելու համար:

Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկությունն ընդունվում է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի ծայնների կեսից ավելիով: Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է մարզպետին՝ դրան կցելով համայնքի ղեկավարի կարծիքը:

Մարզպետը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին համայնքից ստացած փաստաթղթերը եռօրյա ժամկետում ներկայացնում է կառավարություն՝ կցելով իր կարծիքը:

Համայնքի ավագանին համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկությունը կարող է քննարկել համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո:»

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «1.1» կետով.

«1.1. ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածում.

1. 1-ին մասի 7-րդ կետում «քվեարկությունների» բառից հետո լրացնել «(ինչը պետք է արտացոլված լինի իր մասնակցությամբ ավագանու նիստերի ընթացքում ընդունված փաստաթղթերի ստորագրություններով)» բառերը.

2. 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3. 3-րդ մասում «հոդվածի 9-րդ կետով» բառերը փոխարինել «հոդվածով» բառով.

Հոդված 6. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են նաեւ, եթե.

1) ավագանու անդամների կողմից ավագանու նիստի իրավազորությունը չապահովելու պատճառով վեց ամիս անընդմեջ ավագանու նիստ չի կայանում.

2) օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր:»

Հոդված 7. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Նշված դեպքերում համայնքի ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների դադարման մասին արձանագրություն, որը համապատասխան մարզպետի միջոցով ներկայացվում է պետական լիազորված մարմին:»

Հոդված 8. Օրենքի 72-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 72. Համայնքի ղեկավարի պաշտոնանկությունը մարզպետի ներկայացմամբ**

Մարզպետի ներկայացմամբ համայնքի ղեկավարը կարող է պաշտոնանկ արվել կառավարության որոշմամբ:

Մարզպետը կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկություն ներկայացնել կառավարություն.

1) համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջե փաստացի ստացված եկամուտների սահմաններում պարտադիր լիազորությունները չկատարելու կամ պետության պատվիրակած լիազորություններն անբավարար կատարելու դեպքում,

2) այն դեպքում, երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անվավեր են ճանաչվել համայնքի ղեկավարի՝ օրենքին կամ այլ իրավական ակտերին հակասող մի շարք որոշումները,

3) մեկ տարվա ընթացքում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում համայնքի ղեկավարի կողմից երկու անգամ նիստ չիրավիրելու դեպքում:

Պաշտոնանկության հարց կարող է բարձրացվել համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո:

Մարզպետը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու որոշման նախագիծն իր հիմնավորումներով կառավարություն ներկայացնելուց առաջ ուղարկում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը, ստանալով որոշման նախագիծը, երկշաբաթյա ժամկետում գումարում է համայնքի ավագանու արտահերթ նիստ: Համայնքի ավագանին իր նիստում քննարկում է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին մարզպետի հիմնավորումները եւ, լսելով համայնքի ղեկավարին, ընդունում է համապատասխան հիմնավորումներով որոշում: Համայնքի ավագանու որոշումը, որին կցվում է համայնքի ղեկավարի կարծիքը, եռօրյա ժամկետում ուղարկվում է պետական լիազորված մարմին եւ մարզպետին: Մարզպետը, պետական լիազորված մարմնի միջոցով, կառավարություն է ներկայացնում իր հիմնավորումներով որոշման նախագիծը՝ կցելով համայնքի ղեկավարի կարծիքը եւ համայնքի ավագանու որոշումը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ ԱԺ պատգամավորներից ստացված առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3
Ա. Մինասյան	1-ին հոդվածում լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն «ամրվազն երկու երրորդը», իսկ 2-րդ հոդվածի 1-ին մասում «օրենքով սահմանված թվի կեսից ավելին» քանակները	<p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի համաձայն՝ «Համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:» Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Համայնքի ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին:» Օրինակ, եթե ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թիվն է 15-ը և ընտրվել է թվով 8 ավագանու անդամ՝ (ինչպես Իջևանում) ավագանին համարվում է կազմավորված, սակայն նիստերի գումարումը դառնում է խնդրահարույց, քանի որ ավագանու անգամ մեկ անդամի բացակայության դեպքում նիստը իրավագոր չի լինում: Արդյունքում, ավագանու նիստերի զգալի մասը իրավագոր չլինելու հիմքով չի կայանում: Դա կարող է համընկնել համայնքի բյուջեի հաստատման, այլ կարևոր որոշումների ընդունման գործընթացների հետ: Դրա հետևանքով ձգձգվում է համայնքի համար կարևորագույն ծրագրային փաստաթղթի (բյուջեի) և այլ փաստաթղթերի ընդունումը: 11-րդ հոդվածում «կեսից ավելին» բառերը փոխարինելով «ամրվազն երկու երրորդը» բառերով բարձրացվում է այն շեմը, որի դեպքում ավագանին ձևավորված կհամարվի, ինչը հետագայում կբացառի վերոնշյալ բարդությունները:</p> <p>Հաջորդ փոփոխությունը (օրենքի 14-րդ հոդվածում ավագանու նիստի իրավագորության անհրաժեշտ շեմը մինչև ավագանու անդամների օրենքով սահմանված թվի երկու երրորդն ավելացնելը) նպատակ ունի հստակեցնել ավագանու նիստերի իրավագորության անհրաժեշտ շեմը, քանի որ տրամաբանական չէ, երբ օրենքով սահմանված ավագանու անդամների թվաքանակն է 15-ը, իսկ, օրինակ, համայնքի բյուջեն ընդունվում է 3 կողմ ձայներով (վերոնշյալ սխեմայով՝ ընտրվել են 8-ը, նիստին ներկա են 5-ը, կողմ են քվեարկել 3-ը): Մեր առաջարկած սխեմայով այդ թվերը կբաշխվեն հետևյալ կերպ (նույն 15-ի դեպքում). կազմավորման անհրաժեշտ քանակն է 10-ը, նիստի իրավագորության քանակն է 8-ը, որոշում ընդունելու համար անհրաժեշտ ձայների քանակն է 5-ը: Այսպիսով, բարձրանում է ավագանու յուրաքանչյուր անդամի ձայնի կարևորությունը (հետևաբար, նաև ավագանու նիստերին մասնակցելու անհրաժեշտությունը)՝ որոշումներ ընդունելու համատեքստում:</p>
Ա. Հովհաննիսյան	2-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ պաշտոնակատարը, ինչպես նաև» բառերը փոխարինել «և» բառով	Ընդունվել է

<p>Կ. Նահապետյան Ա. Մինասյան Ա. Հովհաննիսյան</p>	<p>3-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անբավարար» և 2-րդ կետի «մի շարք որոշումները» բառերը հստակեցնել</p>	<p>Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2009 թվականի ՍԴՈ-818 որոշման մեջ նշում է. «Օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»: Հատկանշական է, որ նման հասկացությունների և դրանց բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտումը իրականացվում է նաև իրավակիրառ պրակտիկայում՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները: Ուստի, այն հարցը, թե որ խախտումներն են լիազորության կատարումը դարձնում անբավարար, կարող է դիտարկվել ոչ թե վերացականորեն, այլ բացառապես կոնկրետ փաստական հանգամանքների շրջանակում՝ հաշվի առնելով ինչպես խախտման կամ խախտումների բնույթը, այնպես էլ դրանց ազդեցությունը լիազորության կատարման դեպքում ակնկալվող արդյունքի վրա: Նույնը վերաբերում է «մի շարք որոշումները» սահմանմանը, ինչը նույապես պետք է դիտարկվի կոնկրետ փաստական հանգամանքների շրջանակում: Ընդունվել է, հոդվածը լրամշակվել է</p>
<p>Ա. Հովհաննիսյան</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին մասում. «Ավագանու անդամների լիազորությունները» բառերը փոխարինել «Ավագանու լիազորությունները» բառերով: «Երեք ամիս ժամկետը» առաջարկում են ավելացնել</p>	<p>Ընդունվել է, «Երեք» բառը փոխարինվել է «վեց» բառով</p>
<p>Հ. Նաղդալյան</p>	<p>Կարծում են, 8-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 72-րդ հոդվածի վերջին պարբերությունը չի բխում այդ հոդվածի տրամաբանությունից:</p>	<p>Ընդունվել է մասամբ, պարբերությունը հանվել է (և ոչ թե տեղափոխվել), քանի որ նմանատիպ դրույթ առկա է օրենքի 77.5-րդ հոդվածի 4-րդ մասում:</p>
<p>Մ. Սարգսյան</p>	<p>1. Նախագծի 3-րդ հոդվածի վերջին և 8-րդ հոդվածի «Պաշտոնանկության հարց կարող է բարձրացվել համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո» պարբերությունները հանել, քանի որ դրանք հակասում են օրենքի նախագծի 3-րդ և 8-րդ հոդվածների 1), 2), 3) կետերում ամրագրված դրույթներին: 2. Հստակեցնել օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված «մի շարք» բառերը:</p>	<p>Չի ընդունվել, քանի որ տրամաբանական ենք համարում, որ համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկությունը պետք է արվի որոշակի ժամանակահատվածի արդյունքներով (մանավանդ, որ դրույթը հավասարապես վերաբերում է նաև առաջին անգամ ընտրված համայնքի ղեկավարին):</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>1. Լրամշակել նախագծի 3-րդ և 8-րդ հոդվածների 3-րդ մասերը այնպես, որպեսզի միանշանակ երևա, որ նշված ժամկետում նիստի չկայանալը համայնքի ավագանիների անդամների կողմից նիստի իրավազորությունը չապահովելու պատճառով չի կարող դիտարկվել որպես համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմք: Այդտեղից պետք է բխի միայն համայնքի ղեկավարի կողմից այդ</p>	<p>Ընդունվել է, նախագծի 3-րդ և 8-րդ հոդվածների 3-րդ մասերը լրամշակվել են</p>

	<p>Ժամկետը խախտելու հանգամանքի (երկամսյա ժամկետում նիստ չիրավիրելու) նկատմամբ պատասխանատվությունը:</p> <p>2. Լրանշակել նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը, հստակեցնելով, որ հաշվի են առնվելու բացառապես ավագանու նիստի ընթացքում փաստաթղթերի ստորագրությունները:</p>	<p>Ընդունվել է, նախագծի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրանշակվել է</p>
--	--	---